

միայն ճաճանչք դպրութեան, ըստ վկայութեան յիշեցելոց ժամանակագրին, մարթ է մեզ ասել, զի եթէ եւ ոչ այլ ինչ բայց զայս միայն լաւութիւն հայթհայթեալ էր Լեւոնի եւ թողեալ մեզ զճրագ հանճարոյ եւ իմաստասիրութեան նախնեաց մերոց, արժան էր ունել զնա եւ պաշտել իբրեւ արդարեւ երախտաւոր մեծագործ*:

* Արժան էր ողջոյն դրուագ բանի նուիրել 'ի քննութիւն եւ 'ի գովութիւն ուսումնական բարգաւաճանաց 'ի Կիլիկիա, յաւուրս թագաւորութեան Լեւոնեանց եւ Հեթմեանց, եթէ կամեցեալ էր բովանդակել զտեսութիւն համօրէն պարագայի պայագատութեան նոցին. եւ մանաւանդ եթէ շնորհեալ էր մեզ զերծ գտանել 'ի ժլատ ժամանակաց եւ 'ի ձեռաց, եւ վայելել 'ի հրաւեր վերոյգրեալ ժամանակագրին. որ յետ յիշելոյ զպատուական մատեանսն, յաւելու. «Թէ անհաւան լինիս՝ ե՛կ եւ տես, եւ տուր փառս Աստուծոյ»: Թէպէտ եւ ճառեցաւ այլուր զուսումնական համբաւոյ Սոյ (224),

Միքքամին եւս ընդարձակ

ակնարկելով, եւ յաւէտ 'ի Գրասէրս եւ 'ի Գրագէտս նորին:

Յայսմ յետին դասուէ գլխաւորքն եւ ծանօթքն մեզ յիշեցան ըստ կարգի Տեղագրութեանս, զորոց զանուանս միայն երկրորդել կայ ինձ աստանօր, եւ զմնացորդս կամ զմոռացօնս ինչ գործոց նոցին, հանդերձ այլովք եւս անյիշատակ գրագիտօք. որոց ամենեցուն վեհագոյն կայ, որպէս եւ յայլ բազում դէմս, Լամբրունեցին Ներսէս,

գրեաթէ եւ

ժամանակաւ. որոյ՝ զատ յայնց յիշեցեալ գրուածոց (յԵ) Գտանին եւ այլ ինչ ինչ յիշեալք յոմանց. որպէս, Կանոն Եպիսկոպոսօրհնէից եւ Կաթողիկոսօրհնէից, Տօնացոյց, Վարք Գր. Նարեկացոյ, Մեկնութիւն ութ խորհրդոց՝ ինդրոյ Ատոմայ ճգնաւորի, Անուանք Քաղաքաց-շինողաց, 'ի ինդրոյ Աբուսայիտ բժշկի, եւ Վիպասանութիւն Վարուց Ներսիսի Շնորհալոյ:– Որիշ 'ի նմանէ եւ սակաւուք երիցագոյն, եւ ոչ հեռի 'ի սահմանաց Կիլիկիոյ՝ յիշի եւ համանուն ոմն Տէր Ներսէս,

որ եւ

եպիսկոպոս եղեալ է, որպէս թուի 'ի Դրագարկ. առաջնորդ տեղւոյն Տէր Բարսեղ (տես յէջ 231) տրուալ բովանդակութիւն

Կաթողիկեայց (Ոսկիբերանի?), տայր թարգմանել 'ի Լամբրուն ձեռամբ Գրիգորի դպրի, 100-1) արժեւ հոչակա պատանեկութեան կամ յերիտասարդութեան տիս գոլով, եւ արդէն հմուտ յոյն լեզուի, եւ երկարակեաց լեալ վաթսուն եւս ամս յետ այսորիկ. բայց զի տակաւին դպիր էր եւ ոչ քաջավարժ, յիշեալս այս Ներսէս՝ «յարմարեաց (յԵ) յամի 1163)

զթարգմանութիւնն զայն Կաթողիկեայց, որ անձանօթ է ինձ, եւ գրեաթէ